ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 179

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով «Աշոտ Հակոբյան » Ա/Ձ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև քաղ Սուսաննա Հակոբյանի կողմից լիազորված անձ Սամվել Սարգսյանի ներկայացրած դիմումը՝ **որոշում եմ.**

1. Թույլատրել քաղ. Սուսաննա Հակոբյանի սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, Երևան-Սևան մայրուղի թիվ 12 հասցեում գտնվող 602.9 քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և դրա վրա գտնվող շինությունները բաժանել 2 մասի՝ 337.3 քմ և 265.6 քմ:

2. Հողամասի 265.6 քմ հատվածին և դրա վրա գտնվող շինությանը տրամադրել նոր հասցե ՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, Երևան-Սևան մայրուղի թիվ 12/1-1, իսկ 337.3 քմ հատվածի հողամասին և դրա վրա առկա շինությունների հասցեն թողնել ՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, Երևան-Սևան մայրուղի 12:

3. Սույն որոշումն ուժի մեջ է գտնվում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19 թ.հոկտեմբերի 07
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 180

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 155 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով **որոշում եմ.**

Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 13-ի «Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 155 որոշման նախաբանը փոփոխել և կարդալ նոր խմբագրմամբ «Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պահանջը,ինչպես նաև Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 26-ի թիվ 40-Ա որոշման պահանջը, համայնքի գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19 թ.հոկտեմբերի 08
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ 181

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ**

2019 թվականի հոկտեմբերի 14-ին ժամը 17:00-ին հրավիրել Վերին Պտղնի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝հետևյալ օրակարգով

1. Վերին Պտղնի համայնքի 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19 թ.հոկտեմբերի 10
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
11ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 182

ՔԱՂ. ՎԱՐԴՈՒՀԻ ԹԵԼՄԱԶՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Վ. Թելմազյանի դիմումը՝ **որոշում եմ.**

Հարգել Վ. Թելմազյանի խնդրանքը և թույլատրել վերջինիս քանդել իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում գտնվող (համաձայն անշարժ գույքի N 2515270 վկայականի) N2 գոմը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19թ.հոկտեմբերի 11
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 183

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՏԵՓԱՆ ՇԱԼԻԿՈՅԻ ԷՎԱՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N88 որոշմամբ, հիմք ընդունելով քաղաքացի Ստեփան Շալիկոյի Էվաջյանի կողմից ներկայացված դիմում-հայտը՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Ստեփան Շալիկոյի Էվաջյանին պատկանող՝ գ. Վերին Պտղնի, Նոր թաղամաս, 1-ին փողոց, թիվ 1 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության շինության գործառական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19թ. հոկտեմբերի 11
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 184

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն, 2019 թվականի մարտի 15-ի թիվ 16-Ն, օգոստոսի 26-ի թիվ 41 -Ա որոշումները, ինչպես նաև 2019 թվականի հոկտեմբերի 11-ի հողամասն աճուրդով օտարելու մասին N 1 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1.Վերին Պտղնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 07-062-0022-0004 կադաստային ծածկագրով 0.01936 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասն օտարել 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կայացած աճուրդում հաղթող ճանաչված Պարույր Սարգիսի Հովսեփյանին:

2. Պարույր Սարգիսի Հովսեփյանը պարտավոր է՝

1)համայնքապետարանի 900105231170 հաշվեհամարին վճարել 946000 (ինն հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ՝ որպես հողամասի գինը.

2)համայնքապետարանի 900105231063 հաշվեհամարին վճարել 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար.

3.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Պարույր Սարգիսի Հովսեփյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19թ. հոկտեմբերի 11
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670 E-mail
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 185

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն, 2019 թվականի մարտի 15-ի թիվ 16-Ն, 2019թվականի հուլիսի 10-ի թիվ 33-Ա որոշումները՝ ինչպես նաև 2019 թվականի հոկտեմբերի 11-ի հողամասն մրցույթով կառուցապատման իրավունքով հատկացնելու վերաբերյալ N 2 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1.Վերին Պտղնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակությամբ 07-062-0001-0191 ծածկագրով 0.010189 հա հողամասը և 07-062-0001-0191-001 ծածկագրով 24.46 քմ առևտրի սրահը / որն ընդգրկված է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում/ մրցույթային կարգով կառուցապատման իրավունքով, 60 տարի ժամկետով տրամադրել 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կայացած մրցույթում առավելագույն գին 276 092 (երկու հարյուր յոթանասունվեց հազար իննսուներկու) ՀՀ դրամով առաջարկած Տարոն Քոսյանին:

2.Տարոն Քոսյանը պարտավոր է՝

1)Համայնքապետարանի 900105231204 հաշվեհամարին վճարել գին 276 092 (երկու հարյուր յոթանասունվեց հազար իննսուներկու) ՀՀ դրամ՝ որպես հողամասի կառուցապատման վճար.

2)համայնքապետարանի 900105231063 հաշվեհամարին վճարել 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունքով մրցույթային կարգով փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար.

3.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Պարույր Սարգիսի Հովսեփյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19թ.հոկտեմբերի 11
գ.Վերին Պտղնի